ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. մայիսի 22-24-ը Բրյուսել (Բելգիայի Թագավորություն) գործուղման արդյունքների մասին

Անուն, ազգանունը՝

Գարեգին Մելքոնյան

Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի առաջին տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝

Բրյուսել (Բելգիայի Թագավորություն), 2017թ. մայիսի 22-24-ը

Գործուղման նպատակը

Մասնակցություն ՀՀ-ԵՄ Համագործակցության խորհրդի 17-րդ նիստին

Քննարկված թեմաները՝

- Ընդհանուր քաղաքական հարցեր
- ԵՄ Արևելյան գործընկերություն և Եվրոպական հարևանության քաղաքականություն
- ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
- ՀՀ-ԵՄ գործընկերության առաջնայնությունները
- Տնտեսական, առևտրային և ոլորտային համագործակցության հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

<u>ՀՀ-ԵՄ տնտեսական և առևտրային համագործակցություն</u>

ՀՀ-ԵՄ համագործակցության խորհրդի 17-րդ նիստի շրջանակներում իմ կողմից հնչեցված ելույթում կարևորվեց Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (ՀԸԳՀ) շուրջ 2016 թվականի ընթացքում իրականացված ակտիվ և արդյունավետ աշխատանքներն ու բանակցությունների բարեհաջող ավարտը:

Ներկայացվեցին ՀԸԳՀ առևտրի և առևտրին առնչվող հարցերի ուղղությամբ իրականացված բանակցությունները: Մասնավորապես նշվեց, որ 6 բանակցային փուլերի և մի շարք տեսակոնֆերանսների արդյունքում ավարտին են հասցվել բոլոր 14 բանակցային գլուխների շուրջ բանակցությունները: Նշվեց, որ 2017 թվականի մարտին կայացած նախաստորագրումից հետո ներկայումս ընթանում է ՀԸԳՀ առևտրի և առևտրին առնչվող հարցերի ուղղության տեքստերի իրավական հղկման գործընթացը: Կարևորվեց նշված գործընթացի շրջանակներում ԵՄ կողմից տեքստերում համապատասխան առաջարկների տրամադրումը և գործընթացի արագ և արդյունավետ ընթացքի համատեղ ապահովումը:

Ներկայացվեց ԵՄ կողմից Հայաստանին տրամադրվող բյուջետային և տեխնիկական աջակցության, ինչպես նաև ԵՄ աջակցության գործիքների իրականացման շրջանակներում զարգացումները: Ներկայացվեց նաև 2016 թվականի Հայաստանի ընդհանուր տնտեսական ցուցանիշներն ու ՀՀ-ԵՄ առևտրաշրջանառության վիճակագրությունը:

Կարևորվեց Հայաստանին տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» (GSP+) արտոնյալ առևտրային ռեժիմի մոնիտորինգի շրջանակներում 27 միջազգային կոնվենցիաների իրականացման ընթացիկ իրավիճակի վերաբերյալ Հայաստանի հերթական համապարփակ զեկույցի պատրաստումն ու տրամադրումը ԵՀ-ին 2017 թվականի մայիս ամսին:

Գործուղվողը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի առաջին տեղակալ՝ Գարեգին Մելքոնյան:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

05. 06. 2017թ.